ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-26/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 27.04.2026թ. N 239/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.05.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Երեղյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ռ.Իսահակյանը, Լ.Հարությունյանը, Լ.Փամբուխչյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Ս.Ալավերդյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Երեղյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԳՀԾՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացրել Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը: Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է)՝

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ-ին, «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ին, Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ին, «ԱՅԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Մարգարիտա Հակոբյանին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2026 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝

-«ԱՅԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ճանաչել ընտրված մասնակից:

-Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ-ին 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ճանաչել ընտրված մասնակից:

-Ա/Ձ Մարգարիտա Հակոբյանին 6-րդ չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից:

-«Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից:

3. ՊԵԿ-ԳՀԾՁԲ-26/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակիցներ «ԱՅԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին, Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ-ին, Ա/Ձ Մարգարիտա Հակոբյանին և «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ԱՅԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ից, Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ-ից, Ա/Ձ Մարգարիտա Հակոբյանից և «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Երեղյան

Անդամներ՝ Ռ.Իսահակյան

Լ.Հարությունյան

Լ.Փամբուխչյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան